

1) 21-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<21) սննդամթերքի և սննդային միջավայրի հետ շփման համար նախատեսված պոլիմերային և այլ նյութերից պատրաստված արտադրանքին և նյութերին ներկայացվող պահանջների հաստատումը.>>,

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 22-րդ և 23-րդ կետերով.
<<22) շշալցված խմելու ջրին ներկայացվող պահանջների հաստատումը,
23) սույն օրենքից բխող այլ իրավական ակտերի ընդունումը:>>,

Հոդված 3. Օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետից հանել «գենետիկորեն ձևափախված օրգանիզմների», բառերը:

Հոդված 4. Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետից հանել «կամ արտահանող երկրի համարժեք իրավական ակտերով սահմանված պահանջներին» բառերը:

Հոդված 5. Օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի՝

1. 4-րդ կետից հանել «կամ մաքուր» բառերը.
2. 6-րդ կետից հանել «հնարավորության սահմաններում»

բառերը:

Հոդված 6. Օրենքի 15-րդ հոդվածի՝

1. 1-ին մասում «բուսասանիտարական» բառից հետո «սերտիֆիկատ» բառը փոխարինել «հավաստագիր» բառով, իսկ «կամ» բառից հետո լրացնել «համապատասխանության գնահատման» բառերով.

2. 4-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 7. Օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Սույն օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասությունը, 3-րդ մասը, 12-րդ հոդվածի 6-րդ մասը և 16-րդ հոդվածի 4-րդ մասն ուժի մեջ են մտնում 2015 թվականի հունվարի 1-ից»:

Հոդված 8. Օրենքի ողջ տեքստում «վերահսկող մարմին» բառերը և դրա հոլովաձևերը համապատասխանաբար փոխարինել «լիազոր մարմին» բառերով և դրա համապատասխան հոլովաձևերով:

Հոդված 9. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: